ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Անվանի մտավորականի վաստակն իր ուրույն տեղը կունենա հայ ժողովրդի պատմության մեջ

Դեկտեմբերի 6-ին, 77 տարեկան հասակում կյանքից հեռացել է Մանկավարժական համալսարանի Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, Երևանի, Սարդարապատ թանգարանների, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն, ԽՍՀՄ նախարարների խորհրդի և ՀՀ պետական մրցանակների դափնեկիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանը:

Լավրենտի Բարսեղյանը 1959 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1968–1972 թթ. ղեկավարել է Երևանի ամրոցի, Գառնիի տաճարի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի (Դսեղ) վերականգնման աշխատանքները: 1973–1978 թթ. եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության մշակութալուսավորչական հիմնարկների վարչության պետ: 1978–1985 թթ.՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն, 1984–1985 թթ. միաժամանակ՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն: 1988–1991 թթ. ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետն էր, 1992–1995 թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի ընդհանուր հարցերի գծով տեղակալը:

Լավրենտի Բարսեղյանը մի շարք թանգարանների գիտական ցուցադրությունների հեղինակ էր: Նրա աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցե-

ին նվիրված պատմագիտական և աղբյուրագիտական հետազոտությունների ամփոփմանը, Հայոց ցեղասպանությանը:

Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային ԳԱ նախագահության անդամ (1998 թվականից) էր, «Ազգային անվտանգության հիմնախնդիրների համահայկական ակադեմիա» հասարակական կազմակերպության նախագահը (2003 թվականից):

Մինչև կյանքի վերջին օրը Լավրենտի Բարսեղյանն աշխատել է Մանկավարժական համալսարանում և իր փորձն ու գիտելիքների անսահման պաշարը փոխանցել ուսանողներին:

Լավրենտի Բարսեղյանի հոգեհանգիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 8-ին, Սուրբ Հովհաննես եկեղեցում (Կոնդի): Վերջին հրաժեշտը տեղի ունեցավ դեկտեմբերի 9-ին, Կամերային երաժշտության տանը: Մարմինն ամփոփվեց Երևանի քաղաքային պանթեոնում:

Կառավարական հանձնաժողով
«Ազգ» 12. XII. 2014